ՌՈԲԵՐՏ ՂԵՎՈՆԴՅԱՆ
ROBERT GHEVONDYAN

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ» ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Սառը պատերազմին հաջորդած միաբևեռ աշխարհն այլևս անցյալում է: Նոր աշխարհակարգը ենթադրում է բազմաթիվ բևեռների առկայություն, որոնք, ցանցային կառավարման պայմաններում, ենթակա են անընդհատ վերափոխումների: «Արաբական գարնան» իրադարձությունները այդ փոփոխությունների անխուսափելիության վկայություն են: Համաշխարհային քաղաքական դաշտի անընդհատ ձևափոխումները ստեղծում են մի իրսկիճակ, երբ էթնիկական միավորների կողմից նոր մարտահրավերներին համարժեք պատասխանելու հրամայականը վերածվում է գոյատևման ու զարգացման նախապայմանի: Հայ հասարակությունը, գտնվելով քաղաքական զարգացումներով հարուստ տարածաշրջանում, հատկապես կարիք ունի համախմբման և, Սփյուռքի մեր հայրենակիցների ջանքերի ներգրավմամբ, միասնական մոտեցումների մշակման. «Բեկման գծերով շրջափակված, ուրույն քաղաքակրթության որոշակի հատկանիշներ կրող Հայաստանն ու հայ ժողովուրդը տեղեկատվական (հետարդյունաբերական) համաշխարհային քաղաքակրթության որոգայթներում չխճճվելու և համաշխարհային իրադրության անկանխատեսելի բազմաբևեռայնության բևեռներում չմոլորվելու համար պետք է հստակ ձևակերպեն իրենց ինքնությունը, այն պահպանելու և զարգացնելու ուղիները»[1]:

«Հայկական աշխարհի» ձևավորման և գործարկման տեսական մոտեցումները, ինչպես նաև կիրառական որոշ արդյունքներ հույս են ներշնչում, որ այն մոտ ապագայում կհանդիսանա այն հարթակը, որտեղ համաշխարհային զարգացումներին զուգահեռ անընդհատ կմշակվի և կարդիականանա հայ էթնիկ միավորի զարգացման ուղեհիշը: Միաժամանակ ՀՀ–ԼՂՀ–Սփյուռք տարածությունում իրականացվող գործընթացներին մասնակցության ծավալների ապահովման և ավելացման նկատառումներով կարևորվում է քաղաքական որոշումների կայացման գործընթացի թափանցիկության և

[1] Տիգրանյան Ա., Սարգարյան Հ., Հայաստանի քաղաքակրթական ինքնությունը քաղաքակրթական բախումների և երկխոսության համատեքստում http://dpir.mskh.am/arxiv/dpir23-4.html

այդ որոշումներում բազմակողմանի շահերի ներդրումման հնարավորությունների ստեղծումը:

Հայաստանի Հանրապետության անկախ հռչակումից անցել է 21 տարի. սակայն դեռևս լրջագույն խնդիրներ են առկա ժողովրդավարական արժեքների հաստատման ճանապարհին: Առաջին հերթին խոսքը վերաբերվում է ամբողջատիրական համակարգի լուծը թոթափած մարդկանց կողմից բարդահոգեբանական առումով քաղաքացիական իրական դրսևորումների ընկալմանը, քաղաքացիական իրավունքների և պարտականությունների գիտակցմանը: Ինչպես նշում է իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Հարությունյանը. «...մենք՝ որպես հայի տեսակ, որպես ժողովուրդ, երրորդ հազարամյակի նախաշեմին վերահաստատեցինք մեր անկախությունը, սակայն դեռևս չենք կրում անկախ պետության լիարժեք քաղաքացու համար անհրաժեշտ քաղաքացիական որակներ» [1, էջ 104]: Հայաստանի քաղաքացին դժվարությամբ է կողմնորոշվում սոցիալ–քաղաքական միջավայրում, չի կարողանում պաշտպանել իր իրավունքները, իրականացնել սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված գործառույթները, չի կարողանում կամ չի ցանկանում մասնակցություն ցուցաբերել քաղաքական որոշումների կայացման գործընթացին, ինչպես նաև՝ չի ցուցաբերում նմանատիպ խնդիրների շուրջ համախմբման ձգտում: Այսպիսի երևույթները խոչընդոտում են հասարակության ժողովրդավարական համախմբմանը, նվազում է իրականացվող բարեփոխումների արդյունավետության մակարդակը, արգելակվում է հասարակության մոտ քաղաքական ինքնագիտակցության, ինքնանույնականացման գործընթացների ընթացքը: Հասարակության սոցիալական զարգացման վեկտորը ուղղորդվում է դեպի մարգինալացման, օտարամոլության, արտագաղթի, սեփական քաղաքացիական պարտականությունների իրականացումից խուսափելու, քաղաքական որոշումների մերժման պետականության համար կորստաբեր գործընթացները: Մինչդեռ. «Ժամանակի մարտահրավերներին պատասխանելու համար այսօր պահանջվում է առաջին հերթին ունենալ համամարդկային և ազգային արժեքների հիմքի վրա անվտանգ զարգացող պետություն, որն իր կառավարման համակարգով, բնապատմական զարգացման նոր հարացույցի ձևավորման գործընթացում ծավալած իր գործունեությամբ դինամիկ կերպով կմասնակցի համընդհանուր քաղաքակրթության արդիականացմանը» [2, էջ 124]:

Ժողովրդավարական արժեքների հաստատման գործընթացում հասարակության մոտ քաղաքացու դերակների ներդրման առումով Հայաստանում և Արցախում կարևոր դերակատարում ունեն քաղաքացիական բազմազան նախաձեռնությունները, որոնց գործունեության կարևորագույն առաքելությունը ակտիվ քաղաքացիական հասարակության ձևավորումն ու զարգացումն է: Քաղաքացիական հասարակության ձևավորումը անխուսափելի գործընթաց է, որի միջոցով միայն հնարավոր կդառնա հասնել իրական ժողովրդավարության,

ապահովել ամեն մի քաղաքացու իրավունքների իրացումը նախ պետության ներսում, այնուհետև հետամուտ լինել այլ երկրներում հայկական տեսակետի ընդունմանը և այլևս թույլ չտալ հունդարական սցենարի կրկնություն:

Քաղաքացիական հասարակության գործուն ներկայության վկայություններից մեկը քաղաքական մասնակցության բարձր աստիճանն է: Անհատների կողմից հասարակությունում սեփական գործառույթների իրականացումը ուղղակիորեն կախված է քաղաքական մասնակցության տարբերույթ հնարավորությունների գոյությունից, ինչպես նաև դրանց միջոցով սեփական շահերը պաշտպանելու մատչելիության գիտակցումից. «...մասնակցությունը մարդու իրավունքներից օգտվելու և պարտականությունների կատարման կարևորագույն ինստիտուտն է» [3, էջ 351]: Ընտրություններին, քաղաքական որոշումների կայացմանը առավել բարձր մասնակցության հնարավորությունների առկայությունը և դրանց խթանումը հանդիսանում են քաղաքական համակարգի ժողովրդավարացման, արդեսթեիզմի հաղթահարման և քաղաքական իշխանության լեգիտիմացման նախապայմաններ: Այսպիսով՝ ժողովրդավարական համախմբման նպատակակետ ունեցող հասարակությունում ուժեղ ազգային քաղաքացիական հասարակության գոյությունը բխում է նաև քաղաքական իշխանության շահերից:

Կայացած և զարգացող ազգային քաղաքացիական հասարակության տարբեր հատվածները ոչ միայն ընտրությունների միջոցով, այլև հասարակական և քաղաքական որոշումների նախապատրաստման, կայացման ու իրականացման փուլերում սեփական շահերի ներգրավվածության առավել մեծ հնարավորություններ են ունենում. «...քաղաքացիական հասարակության կառույցները կարող են ապահովել «օբյեկտիվ խմբերի» մասնակցությունը ոչ միայն հասարակական որոշումների ընդունման գործընթացում, այլև դրանց պատրաստման, իրականացման և վերահսկողության գործընթացներում, ինչն էլ հանդիսանում է քաղաքացիական կառավարման «զսպումների և հակակշիռների» բաղադրամասերից մեկը» [4, էջ 61]: Այդպիսի խմբերի միջոցով մասնակցելով քաղաքական որոշումների կայացմանը՝ հասարակության անդամ հանդիսացող քաղաքացին նախապատրաստման փուլում հնարավորություն է ստանում իր տեսակետը բարձրաձայնել, համեմատել սեփական և ընդհանուր մտահոգումները նախապատրաստվող որոշման տարբեր հատվածներ փորձել ձևափոխել ըստ իր շահերի, ինչպես նաև կանխատեսել որոշման իրականացման ազդեցությունը այդ շահերի իրացման վրա: Որոշման կայացման փուլում քաղաքացին խմբի միջոցով արտահայտում է իր կողմ կամ դեմ կարծիքը, ինչը կարող է ինչպես բարոյական, այնպես էլ՝ ուղղակի նշանակություն ունենալ որոշման կայացման վերջնական արդյունքի վրա: Որոշման իրականացման փուլում քաղաքացին ընդունում կամ մերժում է կայացված որոշումը, արտահայտում է իր դիրքորոշումը սահմանադրությամբ և օրենք-

նվազ նախատեսված կարգով, ինչը ևս խոչընդոտներ է դնում ազատվել արդյունավետ։

Քաղաքական գիտության նոր պարադիգմային հասության ներկայացուցիչների կողմից քաղաքական որոշումների ձևավորումը և իրականացումը ենթադրում քաղաքացիական հասարակության գործառույթն է։ Դերմանացի փիլիսոփա և սոցիոլոգ, նոր պարադիգմային ուղղության հետևորդ Յուրգեն Հաբերմասը գտնում է, որ. «Քաղաքական գիտակցությունը գործարկում է քաղաքացիական հասարակության հասարակական ոլորտում, որտեղ ... հասակ ձևավորվում է բնությունը և վերացական օրենքների գիտակցումը և կարիքը և ինչը ի վերջո գալիս է կայանալու՝ որպես օրենքների հիմնավորման միավոր լեգիտիմ միջոց (որտեղ ձևավորվում է հասարակական կարծիք)» [5, էջ 54]։ Փաստորեն կայացնող քաղաքական որոշումների հետևանքների կանխատեսելիության մակարդակի բարձրացման կարելի է հասնել դրանց կայացման բոլոր փուլերում քաղաքացիական հասարակության տարբեր կառույցների ակտիվ ներգրավվածության ապահովմամբ, ինչն էլ ի վերջո կլեգիտիմացնի վերջնական որոշումը։

«Հայկական աշխարհ» նախագծում, հաշվի առնելով, որ այն դիտարկվում է որպես գլոբալ քաղաքացիական հասարակության սահմաններում ՀՀ-Արցսախ-Սփյուռք ամբողջականության շահերին համապատասխան գործող կառույց, մեծ նշանակություն կարող են ստանալ քաղաքական որոշումների կայացման մեխանիզմները։ Համագործակցության բաց դաշտ է հարկավոր համախմբման արդյունքում քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների ստեղծման և քաղաքական որոշումներում քաղաքացիական մասնակցության խթանման համար։ Համագործակցային մեխանիզմների խթանումը ցանցային կառավարման պայմաններում մեղմացնում է քաղաքական որոշումների իրականացման դժվարությունները։ Այս պարագայում արդյունավետ կարող է լինել Սփյուռքի տարբեր հատվածներում առկա ներուժի բացահայտման, փորձի կիրառման, առավել հաջողված մեխանիզմների փոխառնման, ինչպես նաև տարբեր գաղթօջախների միջև կապերի ստեղծմամբ և ամրապնդմամբ որոշումների նախնական շրջանառման ասպարեզի ձևավորումը։ Մյուս կողմից էլ պետք է նշել, որ քանի որ քաղաքական որոշումների կայացման գործընթացում դերակատարները տարաբաժանվում են ֆորմալ, իրական և էլիտա հատվածների [6, էջ 198], որտեղ հասարակության հիմնական մասը որոշումների կայացմանը միայն ֆորմալ մասնակցություն է ունենում, հետևաբար կարիք կա նպաստելու խմբային լիդերության ինստիտուտի զարգացմանը՝ տարբեր հատվածների դիրքորոշումների արծարծման հնարավորությունների ստեղծման նկատառումներով. «...ամեն մի փոքրաքանակ և գիտակից լիդեր ստիպված է կայացնել որոշումներ հաշվի առնելով ինչպես բյուրոկրատիայի և էլիտայի շահերը, այնպես էլ մյուս շահային խմբերի, քաղաքացիների լայն խմբերի» [6, էջ 206]։ Փաստորեն «Հայկական աշխարհի»

շրջանակներում խմբային լիցենզիայի ինստիտուտի զարգացումը կնպաստի ներկայացուցչական ժողովրդավարական կառավարման համակարգի ձևավորմանը, ինչն էլ լուծելու կոնստիտուցիոն գործառնական հնարավորության կոչ հայության առավել մեծ հատվածի շահերը ներառել կայացվող որոշումներում:

ՀՀ քաղաքացիական հասարակության կառույցների արդիականացումը ևս մեկ ուղղություն է, որի զարգացման անհրաժեշտ է հետևանք լինել ՀՀ-ում հասակ զարգացած չնն պետական և մասնավոր հատվածների իրավունքներն ու պարտականությունները: Սոցիալական, կրթական և հատկապես տնտեսական գործունեության ազատ, մրցակցային իրականացման իրավական հստակության երաշխիքներ, մասնավոր հատվածի պարտավորություններն ամրագրող օրենսդրական դաշտի թերի է, առկա են բազմաթիվ սուղանցքներ իրավական պատասխանատվությունից խուսափելու: Փաստորեն այս կամ այն հնարավորության պահանջվելիքի բավարարման գործառույթը մասնավոր հատվածին ստանձնելով հանդերձ պետությունը հաճախ իրավական հիմքեր չի ունենում վերահսկելու կատարողական չափանիշների իրականացմանը կամ թերացումների դեպքում համապատասխան պատժիչ գործողություններ իրականացնելու, իսկ հասարակական թույլ համախմբվածությունն էլ գրկում է անհատներին սեփական իրավունքների համար պայքարելու հնարավորությունից: Ոչ ժամանակակցիական հասարակություն՝ հասարակական կազմակերպություններ, տրիբունություններ, համատիրություններ, ոչ պետական կազմակերպություններ, որոնք գործում են բոլոր ոլորտներում, այդ թվում՝ քաղաքական, անհրաժեշտ են քաղաքական որոշումների կայացման գործընթացը առավել ընկալելի և թափանցիկ դարձնելու համար հենց ՀՀ-ում, քանի որ Սփյուռքում ներդրման համար լավագույն օրինակը Հայաստանի հաջողություններն են: Իսկ Սփյուռքում գործող կառույցների նկատմամբ ուշադրությունը չպետք է կենտրոնանա միայն լոբբիստական խմբերի վրա: Կարիք կա քանակապես և որակապես համալրել «Հայկական աշխարհ» քաղաքական որոշումների կայացման գործընթացներում ներառելով հենց գաղթօջախներում կամ նույնիսկ դրանցից դուրս գործող տվյալ երկրի քաղաքացիական հասարակության բազմազան կառույցներին, որոնք այս կամ այն կերպ հայտնվում են «Հայկական աշխարհի» գործունեության շրջանակում, կամ իրենց նպատակադրումներով ու գործողություններով նպաստում են որոշակի խնդիրների լուծմանը:

Քաղաքացիական հասարակության կառույցներին օժանդակության նկատառումներով մեծ նշանակություն ունեն իշխանական որոշ գործառույթների պատվիրակումը, կառավարման գործընթացում մասնակցության հնարավորությունների ստեղծումը, համապետական և տեղային ինքնակառավարման մարմինների ընտրությունների վերահսկման գործառույթների բաժանումը և այլն: Նշված խնդիրների լուծումը պահանջում է շարունակական օրենսդրական բարեփոխումներ, հատկապես հանրային կյանքի կարգավոր-

ման ոլորտում: Նշանառության հիմնական թիրախ պետք է հանդիսանան գլոբալ քաղաքացիական հասարակության կառույցների հետ հարաբերվող կառույցները, պետք է «Հայկական աշխարհի» ցանցային մեխանիզմների միջոցով խրախուսվեն թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում հայկական ոչ պետական կառույցների կողմից գլոբալ քաղաքական գործընթացներում ներգրավման նկրտումները, ոչ հայկական կառույցների հետ շփումները, փոխադարձ շահերի հիմքի վրա զարգացման միտումները: Հայաստանի Հանրապետությունում կարևորվում է սոցիալական և քաղաքական ծրագրերի իրականացման բարեգործությունների և նվիրատվությունների ձևաչափի փոխարինումը հնարավորությունների ընձեռման ձևաչափով:

«Հայկական աշխարհի» տիրույթներում կապերի ամրապնդումը ենթադրում է բոլոր հատվածների հավասարարժեք կայուն զարգացում՝ հանուն ՀՀ և Արցախի անվտանգության ապահովման, կայուն զարգացման և Սփյուռքում հայ մարդու արժանապատիվ կեցության: Այս նպատակների իրականացման առանցքում պետք է դիտարկել քաղաքական որոշումների կայացման գործընթացի արդիականացումը՝ որպես «Հայկական աշխարհի» ժողովրդավարական արժեհամակարգին համահունչ կայացման գլխավոր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հարությունյան Գ., Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, Նժար, 2005:
2. Մարգարյան Մ., Համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացման հիմնախնդիրները և «Հայկական աշխարհը»/«Հայկական բանակ», Ե., N 1 – 2, 2011:
3. Մարգարյան Մ., Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները ՀՀ-ում, Երևան, «Պետական ծառայություն», 2006:
4. Алексанян А., К вопросу о роли институтов гражданского общества в процессе демократизации Черноморского региона, «Բանբեր Երևանի Համալս.», Ե., 2019, N3 :
5. Habermas J., The Structural Transformation of The Public Sphere, Cambridg, Mit Press, 1993, p. 54:
6. Дегтярев А., Принятие политических решении: Учебное пособие, М., КДУ, 2004, с. 198.

Possibilities of modernization of processes of acceptance political the decision in a realization of context of "The Armenian world"

Formation of "The Armenian world" established the new directions for development of the Armenian civilization. In this sense, process of acceptance political decision is important for safety reasons and competitiveness of space of the RA-NKR-Diaspora. The best way of realization of this purpose is involvement of subjects of civil society in different stages of acceptances political decision, taking into account features of network management.